

### Արձանագրություն հ.3

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի  
24.05.16 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 29 -ը:

Օրակարգում՝

1. Գիտական զեկուցում «ՀՀ հարկային համակարգի էկոլոգիզացիան՝ բարեփոխումներ և հեռանկարներ» (զեկուցող՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Քառյան):
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Արա Քառյանի գիտական զեկուցումը «ՀՀ հարկային համակարգի էկոլոգիզացիան՝ բարեփոխումներ և հեռանկարներ»-ը թեմայով:

Որոշեցին այն գնահատել բավարար և ընդունել ի գիտություն:

Երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ասպիրանտների ատեստավորման արդյունքները: Չատեստավորվածներ չկան:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները: Ստեստավորման մասին քաղվածքները՝ ամեն մի ասպիրանտի համար առանձին, ուղարկվում է ասպիրանտուրայի բաժին:

Ընթացիկ հարցերի շրջանակում լսեցին՝

1. Արամ Լեոնիդի Շեկյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորություն տալու մասին հարցը:

Որոշեցին, հիմք ունենալով միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստի, ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշումները և փակ, գաղտնի քվեարկության արդյունքները (քվեարկությանը մասնակցել են 29-ը, կողմ են քվեարկել 27-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթերի թիվը 2-ն է), Ա.Շեկյանին երաշխավորել ստանալու ՀՀ ԲՈՀ –ի կողմից շնորհվող դոցենտի գիտական կոչում:

2. Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Վարդուշ Գյոզալյանի «Սոցիալական քաղաքականություն» դասընթացի ծրագիրը հրատարակության երաշխավորելու մասին հարցը:

Որոշեցին հիմք ունենալով կառավարման և գործարարության ամբիոնի 22.04.16թ.-ին կայացած նիստի որոշումը, Վ.Գյոզալյանի վերոնշյալ ծրագիրը երաշխավորել հրատարակության:

3. Վ. Առաքելյանին ատենախոսությունների ղեկավարման իրավունք ստանալու համար երաշխավորություն տալու մասին հարցը :

Որոշեցին, հիմք ունենալով կառավարման և գործարարության ամբիոնի 22.04.16թ.-ին կայացած նիստի որոշումը, ամբիոնի համատեղությամբ դասավանդող տ.գ.թ., դոցենտ Վ.Առաքելյանին տալ երաշխավորություն ստանալու թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման իրավունք:

Ֆակուլտետի գիտխորհրդի  
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի  
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Ն.Համբարձումյան